

ՏԱՍԵՆՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄՇԽԿ

Տարեկան դրոշմ 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն կամարատան մեջ:

Ոտարարագրացիր դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция «Мшак»

Կամարատանը ըստ է առաջադրված 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարումին ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարումիններին համար գնորդում են  
խրատանցիկ ըստին 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Գանձակից: Ներքին Լուրեր: ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Յայն-թիֆլիսյան վեճը: Անդրա: Թիֆլիս: Արտաքին Լուրեր: Հեղուկ-ՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ: ՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Կապիթ բեկ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆԶԱԿԻՑ

Մարտի 21

Ամսույ 18-ին քաղաքիս ս. Գեորգ կեղեցու բազում ժողովրդի հասարակ դասի խնդրանքը հրապարակ էր մեր շինությունի և գիտական դասը: Հրապարակում նպատակն էր կամենում է արդեօք այդ ա. ա. գ դասը մասնակցել ժողովրդի հետեակ ծախսերին: քաղաքացիի և հողային հարկեր հաւաքողի (СБОРЩИКЪ ПОЗЕМЕЛЬНИХЪ ПОДАТЕЙ) ուժերի վճարելուն, մորեն ջնջելու համար գանդան պետություն, քաղաքը ջուր բերելու մասին հետադուր ժամանակի ժամանակ առած ծախսերին և երկաթուղու գինը աշխատել քաղաքին մտնողներու համար հարկաւոր 1000 ռուբլին, ընդամենը 2500 ռուբլի ծախսերին: Պէտք է նկատել որ այս տեսակ ծախսեր վճարելու մեր գիտականների մեծ մասը և բոլոր ծառայողները (ի հարկե տեղացի) մինչ այժմ երկնց հեռու են պահել գիտական անկախութեան և չինությունների հարկից ազատ լինելու:

## ԴԱՒԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ  
(1722—1728)

ԺԵ.

Վերջին օրերում Գաւիթ բեկը սաստիկ դառն ված լինելով իր հայրենիքը գնալու պատրաստութիւններով, համարեա մտադրել էր այն, ինչ որ նրա սրտին աւելի մտ էր, ինչ որ նրա համար արեւելի թանկագին էր: Նա մտադրել էր գնալ զիջիկ Թամարին: Հայրենիքի պատասխան բաղձանքը այն աստիճան տիրել էր նրա սրտին, այն աստիճան լարել էր նրա ամբողջ մտաւոր զօրութիւնը, որ նա գտնուում էր մի տեսակ հողեկան յարկաւորութեան մէջ, որ հասցնում էր ինքնամոռացութեան, և ամեն առարկայ, ամեն մտածութիւն, որ չէր նպատակում այդ գաղափարին, նրա համար ոչ միայն նշանակութիւն չուներ, այլ նրա մրա ուշադրութիւն սնգամ դարձնել աւելորդ էր համարում:

Բոլոր անհրաժեշտ նախապատրաստութիւնները կարգի դնելուց յետոյ, մի գիշեր, առանձնացած իր ննջարանում, գրում էր նա իր բարեկամ Ստեփաննոսից ստացած նամակի պատասխանը: Նամակարեւր Աղասին, ճանապարհի հագուստով, բեկի ընդունարանում սպասում էր, որ նամակը վերջացնէ, իրան տայ և ինքը խոյն ճանապարհ ընկնի: Նրա թամբած ձին բակում պատրաստ կանգնած էր:

Իր նամակի մէջ բեկը յայտնում էր օրը, ժամը, երբ կը թողնէ Վրաստանը և կուղևորվի դեպի հայրենիքը: Յայտնում էր անունները այն քաղաքի, որնք էր հետ պիտի լինէր: Մանրամասնաբար պատուէրներ էր տալիս այն զգուշութիւններին մասին, որ պէտք էր գործ դնել իրան ընդունելու ժամանակ, որպէս զի իր ներկայութիւնը Սեւեակայ աշխարհում սկզբում բոլորովին գաղտնի պահելու: Նշանակում էր տեղը, ուր առաջ պիտի տեսնվէր ըմբի միայն Ստեփաննոսի հետ, ապա ամբողջութեան սկզբնական գործողութիւններին մասին խորհուլու համար: Որոշում էր օրը, որ նա պիտի սպասէ իրան նշա-

օրէնքների հիման վրա: Չը մտանանք նաև յիշել, որ այդ պարունակը իրաւունք են համարել միշտ միջանակ յիշեալ գործերի մէջ և մեծ մեծ դատաւորութիւններ անելով, ժողովրդի ձայնը աշխատել խախտելու, իսկ յետոյ, չինանալով իրեն իրաւունքները, չէ կարողացել երբէք ասելու: «պարուններ, եթէ չէք ցանկանում մասնակցել մեր ծախսերին, ապա ինչ իրաւունքով գլխներդ դուրս էք տալի մեր գործերի վերաբերութեամբ...»

Առաջարկից ահա հարցը: Պ. Յերալեանցը (ОТСТАВНОЙ ПОДПОЛКОВНИКЪ) նկատեց որ առաջինը ժողովուրդը երբէք չէ հրաւիրել նրան այս տեսակ գործերի մէջ, և երկրորդը ոչ մէկ ծառայող չինությունի և գիտական վաճառականի իրաւունք չէ տրվում ազատ կացուցանել իրան յիշեալ ծախսերին մասնակցելուց, որքան և նրանք ազատ լինեն հարկաւորութիւնից... Պ. Յերալեանցի նման հասկացող մարդու խօսքերից յետ նրա ընկերներին ոչինչ չէր մնում խօսելու: Բոլորեքանքը համաձայնեցին: Իսկոյն ընտրեցին երկու մարդ իրենց միջից, որ բանալորդի անուն ծախսերի մի մասն իրենց վրա առնէր: Արանով և վերջապա բոլորը:

Բայց, ընթերցող, արի ինձ հետ հէնց ժողովի երկրորդ օրը, մտնանք գիտականներից և ծառայողներից բաղկացած մի խմբի:

«Այ՛ աղբեր, սա ինչ 1000 ռուբլի է, որ տալիս ենք (թէ և ինքը մէկ կողմի էլ չէ տուել երբէք) քաղաքացիներին, պետում է մեր վարկելու պատանանի Ս., ևս 40 տարեկան մարդ եմ, չեմ տեսած կեանքումս, որ ուժեղով դեպուտատ ու-

նակեալ տեղում: Վերջացում էր նամակը, յայտնելով, թէ Սեւեակայ աշխարհից ստացած և պակասուածներ, հողեւոր առաջուրդների, մէջնորդների և ամուսնուհիների հանրային պատասխանը չը գրեց, գլխաւորապէս այն պատճառով, որ այսքան անձինքների մէջ որ և իցէ խորհուրդ իբրև գաղտնիք պահպանել անհնարին էր: Երբ կնքում էր նամակը, յանկարծ նրա ձեռքերը դողացին և դէմքը սպիտակ կտաւ: Նման դրեւաթափվեցաւ: Այս ժամանակ միայն նա մտաբերեց գեղեցիկ միտարկում: Այդ նամակը վճարում էր նրանց միմեանցից անջատումը և գուցէ յախտեան անջատումը... Յանկարծակի հարուածք ստացած մարդու նման սարսափելի խռովութեան մէջ ընկաւ: Նա, կարծես, տեսնում էր սիրած աղջկայ արտասուելից աչքերը և լուռ էր նրա աղաչաւոր ձայնը, ընդ ևս զբնում... ինձ ինչու ևս թողնում... միթէ այդ էր մեր ուխտը... մեր պայմանը...»

Նամակը մի կողմ դնելով, նա ձեռքը տարաւ դէպի ձեռնարկ, առջեկց ծածկից իր մտածութիւնները աւելի ամբողջելու համար: Ամբողջ տարիների ընթացքում պատանած անցքերի մի երկար շարք, իրանց տխուր և ուրախ գոյներով, նկարվեցան նրա աչքի առջև: Նա յիշեց այն թանկագին ժամերը, որ անցուցել էր Թամարի հետ, յիշեց այն անտանան սէրը, այն քնքոյշ, հրեշտակային միջնորդութիւնը, որով նա քաղաքացիում էր իր կեանքի դաճուցութիւնը օտար աշխարհի պանդխտութեան մէջ: Եւ այդ սէրը աւելի մեծ արժէք ուներ նրա համար գլխաւորապէս այն պատճառով, որ նազելի, իշխանական օրիորդ սիրեց նրան իր վիճակի ամենաթշուառ ժամանակում, երբ ինքը մի աննշան հովիւ էր, երբ նրա սպասուուրը լինելու արժանաւորութիւն չուներ: Իսկ այժմ իր փառքի ամենաբարձր աստիճանին հասած, կրթ կարող էր բախտաւորացնել Թամարին, թողնել նրան, և զուցէ յաւերտեան բաժանվել նրանից, այդ ծանր էր, սաստիկ ծանր մի զգայուն սրտի համար, որպիսին էր բեկի սիրտը: Ի՞նչ ասել, ինչպէս բացատրել Թամարին իր գնալու նպատակը, ինչ խօսքերով հանգստացնել նրան: Երբան իս չէր կարելի խաբել, թէ ուխտ եմ գնում և շուտով կը վերադառնամ: Նրան պէտք էր

նեցած լինէր. քանի տարի է մենք Ղ. Ս-ին ուժեղ ենք տալիս. ևս պողպակա կը տամ երկու տարի առանց մէկ կողմի ստանալու նրանից հազար անգամ լուռ ծառայել... ևս երեկվայ յիշած ծախսերի համար մէկ կողմի անգամ չեմ տայ...»

Մէկ օրը չէր նոյն միտքն է յայտնում:

Խեղճ Ս., դուք մտանում էք, որ ժողովուրդը դեռ ևս լուռ է յիշում ձեր քաղաքացիութիւնները, նրան արած ծառայութիւնները և ձեր այժմուս իրաւունքները. դուք չէք ուզում հասկանալ կամ աւելի ճշտն ասած, դուք գիտեք, որ ժողովուրդը պատրաստ է պ. Օհանէսեանցին 1000 ռուբլի ուժեղ մէկ կողմի պէս հեշտութեամբ վճարել (պ. Օհանէսեանցը քաղաքացիութիւնը վարում է 1877 թ. առաջինից, ուժեղ է ստանում 78 թ. առաջինից), քան ձեզ ոչ թէ երկու, այլ չափ ասորիներ մոտաւոր պահելու... Գուր, եթէ իմ խօսքերը բամբասանք և զրպարտութիւն էք համարում, հետի չէ դեկտեմբեր ամիսը, մենք կը սպասենք և կը տեսնենք: Քաղաքացիութիւնը ընտրելու ժամանակ նոյն պայմանի համար առաջին առաջարկութիւնը ևս կանեմ և անպատճառ ձեր անունը կը յիշեմ, միամիտ եղեք: Հետանքը ևս խոստանում եմ անպատճառ հարգողու լրագրում...»

Յիշեցի որ երկաթուղու գինը աշխատել քաղաքին մտնողներու համար հարկաւոր է 1000 ռուբլի: Այդ գումարը միայն հայերը պիտի վճարեն, թուրքերը և 1000 ռուբլի, ընդամենը 2000 ռուբլի:

Բազու-Թիֆլիսեան երկաթուղու գին ամբողջ պարզ արել, թէ գնում եմ կրակի և արեան մէջ, — գնում եմ սարսափելի վտանգների և փորձանքների հետ պատերազմելու: Արդեօք կը դիմանամ սիրող օրիորդի քնքոյշ սիրտը այդ ստակալի խօսքերին: Արդեօք ինքն այնքան ուժ և կամքի հաստատութիւն կունենան, որ յաղթել իր ըզգացմունքներին, որ չընկճվէր նրա արտասուքի առջև, երբ լսելու լինէր այդ խօսքերը: Ընդ, մի գնա... եթէ քեզ մի օր չը տեսնեմ, ես կը մտնեմ...»

Հարիւրաւոր այս տեսակ հարցեր ծագեցան նրա մտքում, խռովում էին, տակնուվրայ էին առում նրա սիրտը, և այն մարդը, որ մինչև այսօր ոչ մի դժուարութեան առջև խոնարհված չէր, այժմ գտնուում էր շուարած, չինոված և բոլորովին անկողնու զրուցեան մէջ:

— Այ, ասաց ինքնիրան երկար մտաւորաբար թուրքից յետոյ, — Թամարը բարձր է բոլոր կանայի թուրքութիւններից, ևս այդ մտածութիւններով ստորացնում եմ նրա արժանաւորութիւնը: Նա ինքը կը ներշնչէ իմ մէջ իր հոգին. նա ինձ ուժ և զօրութիւն կը տայ յաջողութեամբ կատարելու այն մեծ գործը, որի համար հայրենիքը կուզում է ինձ:

Այդ խօսքերից յետոյ նա վեր առեց նամակը և կնքեց: Յետոյ ներս կանչեց Աղասուն, որ ընդունարանում սպասում էր:

— Գուր բոլորովին պատրաստ ես, հարցրեց նրանից:

— Պատրաստ եմ, ձին բակումը սպասում է, այս բողբիս կարող եմ ճանապարհ ընկնել, պատասխանեց սուրճանակը, ընդունելով նամակը և դնելով իր կաշեայ թղթապահի մէջ:

— Գիտես, Աղասի, ասաց նրան բեկը, — եթէ դու այդ նամակը կորցնելու լինես, եթէ դա մեր թշնամիների ձեռքը անցնելու լինի, այն ժամանակ շատ բան կը կորցնենք:

— Այդ մասին անհոգ կացեք, տեր իմ, Աղասին երեխայ չէ: Տեսնում էք այդ հագուստը, որի մէջ մտել եմ, այդ հագուստով ես անհուն գազանների բանակի միջով կարող եմ անցնել և հասնել մինչև մեր երկիրը:

Նա տարից ցղուելի հաղթված էր լեզու ձեռք: — Ուրեմն մի ուշացիր, բարի ճանապարհ եմ ցանկանում քեզ, ասաց բեկը, տալով նրան մի

տարածութեան վրա միայն Գանձակն է: Յուշալին սա է որ այդ գին էլ (որտեղ վակալ պէտք է լինի) առևտրական փողոցից 3—4, իսկ հայոց թաղից 5—6 վերստ հեռավորութեամբ է անցնում: Թէ ինչ է պատճառը, որ ոչ մի քաղաքով չանցնող գինը աշխատել և նա Գանձակից նաև հեռացնել և քաղաքը անբարդացնել, այդ էլ մի մոթ ինդիք է, որը պարզելու այժմ շատ և շատ ուշ և աւելորդ է... Երբ ժողովուրդը հասկացաւ, և այդ վաղուց չէ, որ վակալը հետի պիտի լինի քաղաքից, թէ և մոտ բերելու համար զգալի դժուարութիւն չը կայ, իսկոյն ինդիքով դիմաց կողմերը բարձր կառավարութեանը և ճանապարհների հարցողակցութեանը միմիայն երկաթուղու գինը մտնողներու համար: Կնքեցի հետեանքն այն եղաւ, որ տերութեան ծախսով վակալից մինչ քաղաքին կետրոնը թուրք կամար լի մոտ պիտի խճուղի (моще) շինվի, որտեղ և կը լինի կանտոր միայն բեկիները և բազմ վեր առնելու համար, իսկ ապրանք ստանալ և յանձնել միայն վակալում կարելի կը լինի: Թէ որքան անօգուտ և իմ կարծիքով աւելորդ է քաղաքում կանտոր ունենալը, երբ ապրանքներ պիտի ստացվին և յանձնվին վակալում, այդ հասկանալի է:

Չը նայած, որ վակալի շինութեանց հիմն արդէն սկսված է, ժողովուրդը անցեալ օր մի ինդիք ևս ուղարկեց յիշեալ միմիայն գինը մտնողներու համար: Բայց դրանից արդէն ընտրված են մի քանի մարդիկ Թիֆլիս և Պետերբուրգ ուղարկելու նայն նպատակաւ: Թէ քանի տակնիք ճանապարհին ծախսելու համար: — Պէտք չէ, պատասխանեց Աղասին նրա փորձով լիով, — եթէ ճանապարհին փող հարկաւոր լինի, ես կարող եմ ճարել:

— Ի՞նչ կերպով:

— Մէկի վակալի կը տամ ու ձեռքից կտանեմ:

— Այդ լաւ չէ, Աղասի, ասաց բեկը ծիծաղելով:

— Ո՞վ է ասում, որ լաւ է, բայց ինչ սէտք է արած, այդ իմ սովորութիւնն է... պատասխանեց քաղաքիտ առաջակը, և խոնարհվելով գրկից բեկի ստները:

— Մի ուշացեք, տեր իմ, շուտ եկեք, ամեն մի կորցրած բողբի թանգ է մեզ համար, ասում էր նա աղիտելով, — հայոց խեղճ ժողովուրդը սպասում է ձեզ...»

Բեկը սաստիկ շարժված այդ խօսքերից, ձեռքը տարաւ, վեր բարձրացրեց նրան: Նրա զարմանքը մեծ եղաւ, երբ նկատեց երկաստարդի աչքերում արտասուք: Նրա ձեռքը բռնելով, ասաց նրան.

— Եթէ հայոց բոլոր գիւղացիները քո սիրտն ու քաղաքիւնը կունենային, այն ժամանակ մեր աշխարհը կորած չէր լինի: Գնա, դարձեալ բարի ճանապարհ եմ ցանկանում քեզ: Իսկ ես մի շաբաթից յետոյ իմ հայրենիքում կը լինեմ:

Երբտասարդը կրկին և կրկին դուրս տալով, հեռացաւ: Գրում է մի կողմի վրայ էր: Բեկի ծառայները, սպասուուրները, աղախները, հաւաքված բակում, սպասում էին նրան: Մի քանի օրվայ մէջ Աղասին այն աստիճան ընտելացաւ նրանց հետ, որ ամենքը խիստ ցաւելով բաժանվեցան նրանից: Նա բոլորին մնաց բարով առելով խաչակրեց երեսը, նստեց ձիու վրա և անհետացաւ գիշերային խաւարի մէջ:

ԺՁ.

Մեծ պարտի տան մէջ արդէն բոլորը խօսում էին բեկի ուխտագնացութեան մասին և ունենք պատմում էին, թէ որպիսի ծանրագին ընձաներ է ասում նա հայոց վանքերի ու եկեղեցականների համար: Միայն Թամարը դեռ ոչինչ չէր լսել. բայց նրան սաստիկ անհանգստացնում էր այն հանգամանքը, որ մի քանի օր շարունակ չէր տեսնել իր սիրելիին:

Գիշերից բաւական անցել էր. աքաղաղները

ինչ հետեանք կունենայ խնդիրը և պատգամա-  
ւորութիւնը, կաշխատեմ իր ժամանակին հարգո-  
ղի:

Ժողովրդի առաջին խնդիրը չը կատարելու  
պատճառը նա է, որ ինժեներները ընդհանուր  
ժողովում վճռվել է, որ «տեխնիկական հանգա-  
մանքների պատճառով» երկաթուղու գիծը  
բարձրացնել ղէպի քաղաքը անկարելի է: Այդ  
«տեխնիկական հանգամանքներ» պատճառը բե-  
րիլը ի հարկէ մի քող և մի տեսակ պոլիտիկա-  
կան ձեռք քաղաքաբարի մերժումն է ժողովրդ-  
րի խնդիրը չը կատարելու:— Իսկապէս բանը  
նրանումն է, որ գիծը բարձրացնելու համար բա-  
ւական աւելորդ ծախսեր են հարկուոր, որոնց  
յիշեալ ժողովը համոզված է եղել, որ քաղաքը  
վճարելու անկարող է բոլորովին:— Իսկ էլ այդ-  
պէս է:

Քաղաքացիք յուսումով որ ուշ կամ շուտ կը  
յաջողէ նրանց մինչ քաղաքը մի ճիւղ բերելու  
տեխնիկական հաշուով, ինչպէս Քուրթայի ճեմ  
պատանեց, այժմ աշխատում են և խնդրում են ա-  
պագայ ծախսերով:— քանի որ գծի վրա մի նշա-  
նաւոր ծախսեր չեն արած, երկաթուղու գիծը  
բարձրացնել ղէպի քաղաքը:—

Ցաւում ենք որ մինչ այժմ Գանձակից ոչ մի  
տեղեկութիւն չէ տուած ոչ հայ և ոչ սուս  
լրագիրներում յիշեալ հարցի մասին:— Անհրա-  
ժեշտ է լրագիրների միջամտութիւնը և մի քանի  
ազդու յօդուածներ հրատարակելու այս հարցի  
վերաբերութեամբ:

Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Правит. Вѣстник.» լրագիրը հաղորդում է որ  
կայսերական պալատի մէջ սուգի ժամանակամի-  
ջոցը վեց ամսից երկարացրած է մինչև մի տա-  
րի:

Ս. Պետերբուրգից մեզ գրում են որ մարտի  
14-ին Մոսկովայի հայ հասարակութեան կողմից  
մի պատգամաւորութիւն է եկել Ս. Պետերբուրգ

սկսել էին խօսել: Մեծ պարտնի տան մէջ բողո-  
քը քնած էին, բայց թամարից: Նա առանց հան-  
վելու պահել էր իր անկողնի վրա և տխուր  
մտայուզութեան մէջ նայում էր ճրագի ճաճանչ-  
ներին, թէ որպէս նրանք, իր աչքերը ամեն մի  
բացուխով անելու ժամանակ, զանազան ձևեր  
էին ստանում: Նրա անկողնի մօտ լուռ կանդ-  
նած էր իր մտերիմ աղախինը՝ կատօն, և ան-  
համբերութեամբ սպասում էր, մինչև օրիորդը  
քնէ, որ ինքն էլ գնայ հանգստանալ:

— Կատօ, դարձաւ նա ղէպի աղախինը, — այդ  
ինչ է պատահել, քանի որ է բէկը չէ երևում:  
Կատօն, որի միջնորդութեամբ կատարվում  
էին երկու սիրահարների զգոտնի տեսութիւն-  
ները, ոչինչ չը գտաւ պատասխանելու: Օրիորդի  
հարցումը բաւական անսովորակ եղաւ և աղա-  
խինը ամենին նախապարտադրութեամբ չէր մի յար-  
մար պատասխան յօրինելու, որպէս զի իր տի-  
րուհուն իսպառ չը վնասեցնէ:

— Ի՞նչու չես խօսում, կատօ, քեզանից բան  
եմ հարցնում, կրկնեց օրիորդը:

Աղախինը կմկմաց և դարձեալ ոչինչ չը կա-  
րողացաւ խօսել: Այդ աւելի շարժեց օրիորդի  
կատակածը, և նա գլուխը վեր բարձրացնելով  
բարձի վրայից, նստեց անկողնի վրա: Ճրագի  
լույք այժմ ուղիղ ընկաւ նրա գունամթափ երեսի  
վրա, որ մասամբ սքողված էր գլխի սև մագե-  
րով, որոնք խիտ հիւսկեղով թափվել էին նրա  
կիրաքաց կուրծքի և թիկունքի վրա:

— Կատօ, ինչու չես խօսում, ուղիղն ասա,  
ինչ է պատահել, դարձեալ հարցրեց օրիորդը  
այնպիսի մի ձայնով, կարծես, ինքը աւելի վա-  
խենում էր այն պատասխանից, որ պիտի տար  
աղախինը:

— Չէք լսել, նա գնում է... պատասխանեց  
կատօն, մտածելով, որ իր աղջիկ պարտնին եր-  
կար անգիտակցութեան մէջ պահելը աւելորդ  
էր այնուհետև:

— Գնում է... գուցէ օրիորդը սարսափելով:—  
գնում է առանց ինձ տեսնելու, առանց ինձ մի  
խօսք տեսնելու... ո՞ր է գնում... երբ է գնում...  
Ինչո՞ք աղջկայ աչքերը լցվեցան արտասուքով:

Նա երեսը ծածկեց բարձի վրա, սկսեց գառն  
կերպով հեկեկալ: Շուտով կատօն չը գիտէր  
ինչ անել, ինչով մխիթարել նրան: Նա մօտե-

կերպագրելու ի Տէր հանգուցեալ կայսրի մարմ-  
նին: Պատգամաւորութիւնը բաղկացած էր երեք  
անձինքներից, աւագ քահանայ տէր Յակոբ Մու-  
րէնեանցից, պ. Յովհաննէս Անանովից և պ.  
Գէորգ Լիանօզովից: Պատգամաւորները մտնելով  
Պետրոս-Պողոսեան մայր եկեղեցին, որ ուս-  
սաց կայսրերի գերեզմանատեղին է, դրեցին հան-  
գուցեալ թագաւորի դագաղի վրա մի արծաթեայ  
շքեղ պակ, որի վրա արձանագրված էր «Հա-  
յոց հզօր ջատագով Ազատիչ-կայսրին»:

Բլագովէշչենակից (Սմբուրի վրա) պ. Յովհան-  
նէս Մէլքոնանցից ստացանք 10 բուրլ յօդուած  
Հայաստանի սովետներին:

Աստրախանից, պ. Բուրնիաթ Մէլիկեանցի-  
ցից ստացանք 20 բուրլ հետեալ նամակով:  
«Համակերպով ձեր լրագրի մէջ տպված Ս. Պե-  
տերբուրգի նամակին արտասահմանում թղթա-  
կից պահելու մասին, նոյնպէս ձեր հրատարակ-  
«Միացեալ» ընկերութեանն օգնելու, անս արա  
հետ ուղարկում եմ 20 բուրլ, որից 15 բուրլ  
նուիրում եմ որպէս տարեկան անդամ «Միա-  
ցեալ» ընկերութեանը, իսկ 5 բուրլ խնդրում եմ  
յատկացրէք հայ թղթակից պահելու գումարին,  
որ նոյնպէս խոտանում եմ ամեն տարի տալ,  
եթէ հարկուոր լինի:»

Մեզ գրում են Ս. Պետերբուրգից: «Ինչպէս  
արդէն յայտնի է, յուշար ամսին Ս. Պետեր-  
բուրգի հայ թատրոնները բարեգործական  
նպատակով մի թատրոնական ներկայացում  
տուեցին: Բայց մինչև այժմ դեռ ևս չորսովի-  
ցաւ ճշտութեամբ ներկայացումից դուրսացած գու-  
մարի բանակութիւնը: Յամակալի է իմանալ ինչի  
են ուշացնում պ. պ. ղեկավարները իրանց հաշ-  
ի տալը, որ և կարող էր փարատել այլ և այլ  
անտեղի կասկածներ, որոնք ծնվում են հասա-  
րակութեան մէջ հաշի ուշացնելու պատճառով:»

Ալէքսանդրապօլից մեզ գրում են: «Ղարսից և  
կաղզուանից շատերը գալիս են Ալէքսանդրա-  
պօլ և պատմում են, որ այնտեղ յայտնվել է մի

ցաւ, աշխատում էր հանգստացնել նրան այդ  
խօսքերով:

— Մի լաց լինիք, ցաւը առնեմ, թամար, նա  
իր երկիրը ուրա է գնում, շուտով կը վերա-  
դառնայ: Նա առանց ձեզ տեսնելու, առանց  
ձեզ հետ խօսելու չի գնայ: Հէնց այսօր, ձայնի,  
մեծ պարտնի տեսնակից դուքս զայու ժամանակ  
ինձ ասաց. «Կատօ, թամարին իմացում տուր,  
պի զիչեքը պիտի գամ մնաք բարով տակը: Բայց  
ես յիմարս մտապայ, չը յայտնեցի ձեզ: Կատօն  
իրանից հնարեց վերջին խօսքերը:  
Բէկը նրան ամենին այդպիսի բան ասած չէր:  
Նա մտածեց օրիորդին աստամանակ միայն  
հանգստացնել, մինչև կամ ինքը կը գնայ բէկին  
կը կանչէ, կամ տեսութիւնը կը յետաձգէ հետե-  
ւեալ օրը: Բայց փոխանակ հանգստացնելու,  
աւելի վրդովեց նրան:»

— Ո՞ր է, ապա ինչու չեկաւ, շուտով կէս  
զիչեք կը լինի, ասաց նա գլուխը վեր բարձ-  
րացնելով բարձի վրայից և վայրենի հայացքով  
նայելով իր շուրջը:— Չէ, չէ, նա չի գայ. ես  
ինքս կը գնամ նրա մօտ...»

Այս խօսքերը ասելով, կատաղածի պէս գլու-  
խը բաց, արձակ մագրով նա դուրս պրծաւ:  
Անհետակից և անյայտացաւ. գիշերային խուսարի  
մէջ Աղախինը վազեց նրա ետեղի և հարկե կա-  
րողացաւ բռնել, երբ տակաւին չէր գուրս եկել  
տան բակից:— Թամար, ցաւը առնեմ, ողբաւում  
էր նա, իր գրկի մէջ պահած ունելով ցնորվածի  
պէս խեղճ ու միտքը կորցրած օրիորդին:—  
Թամար, այդպէս չէ կարելի, ինչ կասեն, եթէ  
փողոցում քեզ կը տեսնեն: Այդպէս չէ կարելի,  
թամար: Բէկը ինքը կը գայ, անպատճառ կը  
գայ:

Աղախինի խօսքերը ամենին չը լսեց օրիոր-  
դը, նա այն աստիճան սարսափելի հոգեկան  
վրդովածութիւն մէջ էր գտնվում, գուցէ լսեց բո-  
ւրբ, բայց չը հասկացաւ: Բարբաբով զգաց-  
մունքների կատաղութիւնը նրան ըմբռնել ուժ  
և գորութիւն էր տուել: Կատօն իր գորեղ ձեռ-  
քերով չը կարողացաւ պահել նրան իր գրկի  
մէջ: Նա դուրս պրծաւ և վազեց ղէպի բակի  
դուռը: Բարեբաղդաբար գտնեց բաց էին, եթէ  
ոչ ամբողջ տունը կը զարթեցնէր նա: (Մեծ  
պարտնի գտնեքը սովորաբար զիչեք և ցերեկ

հիւանդութիւն, որից շատ մարդիկ են մեռնում:  
Հիւանդութիւնը կարծաւու է լինում: Կարգուա-  
նում, մանաւանդ, մահացումն համեմատաբար  
մեծ է:»

Ս. Պետերբուրգի դատաստանական պալատի  
պրօկուրօր Պլէվէ յայտնեց որ Տեղեմայա փո-  
ղոցի անձնատպանի ազգանունը Ֆէսէնիօ չէ, այլ  
Սարլին:

Յարտնվում է որ Ֆէսէնիօ ամենին չէ մաս-  
նակցել թագաւորասպանութեան գործում, որով  
հետև վաղուց է որ հիւանդ պառկած է Օղէս-  
սայում:

«Голосъ» հաղորդում է որ Բիսակովի ծնողնե-  
րի տունը պաշտպանվում է պոլիցիայով ամ-  
բոխի կատաղութիւնից:

«Голосъ» լրագիրը հաղորդում է որ կառա-  
վարութիւնը թոյլ է տուել կին-բժշկներին  
պարագել զինուորական հիւանդանոցների իգա-  
կան բաժիններում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՑԵ-ԹԻՒՐԿԱՎԱՆ ՎԷՃԸ

Լրագիրները հաղորդում են Հետեալը: Այժմ  
Այժմեան բանակցութիւնները Կ. Պոլսի մէջ  
քաղաքագէտները զանազանում են նախկին  
դիպլոմատիական գործողութիւններից յու-  
նական խնդրի վերաբերութեամբ: Այդ խնդ-  
րից լուծելու համար արած նախկին փոր-  
ձերի նպատակն էր՝ առաջարկել թիւրքային  
և Յունաստանին մի սահմանագիծ, որի մա-  
սին երկու կողմերը պէտք է համաձայնու-  
թիւն կայացնէին: Բայց այդ համաձայնու-  
թիւնը անկարելի եղաւ կայացնել, որով-  
հետև մի կողմը պէտք է զիջումներ անէր,

բայ էին թողնում): Նա անցաւ առանց նկատ-  
վելու Պահապանները, կծկված իրանց կա-  
փունջների մէջ, նրբում էին:

Այդ միջոցին կատօն շտապով մտաւ օրիորդի  
սենեակը, խլից այնտեղից մի շալ և վազեց նրա  
ետեղի: Նա գտաւ օրիորդին փողոցում, գլուխը  
բաց, հերարձակ աճապարում էր ղէպի բէկի  
տունը:

— Ծածկվեցէք այդ շալով, ես կը տանեմ ձեզ,  
կանգնեցրուց օրիորդին և սկսեց փաթաթել նրա  
գլուխը և ուտերը ընդարձակ շալով:

Փողոցները բոլորովին դատարկ էին և այնքան  
մութ, որ մի քայլ այն կողմը ոչ ոքին չէր կա-  
րել տեսնել: Նրանք գուրս եկան բնակութիւն-  
ներից և անցան ղէպի ամայի դաշտը: Այս կող-  
մից աւելի յարմար էր մօտանալ բէկի տանը, թէև  
ճանապարհը բաւական հեռու էր: Բայց անա-  
գին տարածութիւնը անցան նրանք մի քանի  
բուռի մէջ և շուտով հասան բէկի տան պար-  
տեղի ցանկապատին, որ հիւսված էր փշուր մա-  
ցառներից: Օրիորդը մօտեցաւ ցանկապատին,  
կամրում էր վեր բարձրանալ նրա վրա և իջ-  
նել պարտեղի մէջ: Պարտեղի կողմից մուտքը  
ղէպի բէկի սենեակը աւելի սպասով էր, ամեն-  
ցիններին ոչ ոք չէր տեսնի նրանց:

— Այդ ինչ էք անում, գուրք բոլորովին կը  
ծակոտէք ձեր մարմինը, ասաց աղախինը բո-  
նելով օրիորդի փէշից, որ արդէն կատուի նման  
ճանկատում էր փշոտ ցանկապատը:

Բայց օրիորդի խռովութիւնը թոյլ չը տուեց  
լսել աղախինի զուշացնող ձայնը, նա արագու-  
թեամբ գանկապատից ցատկեց միւս կողմը, ի-  
ջաւ պարտեղի մէջ: Աղախինը նոյնպէս հետեց  
նրա օրինակին, սաստիկ ծակտակով իր ձեռ-  
քերը:

Պարտեղի ամեն մի ձեռնվրդները, ամենափոք-  
րիկ շաւիկներն անգամ ծանօթ էին թամարին:  
Նա զիմեց ուղիղ ղէպի այն կողմը, որտեղ բաց-  
վում էին բէկի ննջարանի լուսամուտները: Նա  
ուրախացաւ և աւելի փութացրեց իր քայլերը:  
Լուսամուտներից ճրագ էր երևում: Ուրեմն նա  
տանն էր, և եթէ տանն էր, դեռ քնած չէր:  
Օրիորդի սիրտը սկսեց սաստիկ բարբախել, փոքր  
էր մնում, որ չնստապառ լինի: Բայց դարձեալ  
նա շարունակեց իր շտապ քայլերը և մօտեցաւ

իսկ միւսը նոր կալուածներ ստանար: Կրա-  
նից յետոյ Բերլինի կոնֆերանցիան մի վճիռ  
կայացրեց և հրաւիրեց երկու կողմերին են-  
թարկվել այդ վճիռին:

Թիւրքիան մերժեց այդ առաջարկու-  
թիւնը, որովհետև նա առաջուց գիտէր, որ  
Բերլինի կոնֆերանցիայի վճիռները իրա-  
գործելու համար Եւրօպան ստիպողական  
միջոցներ չէ գործադրի և որ պետութիւն-  
ները, յայտնելով իրանց կարծիքները և պա-  
հանջելով թիւրքիայից յայտնի զիջումներ,  
այնու ամենայնու գործը թողնում են իր  
ընթացին: Բացի այդ թիւրքիային յայտնի  
էր, որ եւրօպական պետութիւնների հա-  
մաձայնութիւնը կեղծ էր և որ նրանք մի-  
մեանց կասկածում էին: Յունաստանը ընդ-  
հակառակ բաւական էր Բերլինի կոնֆե-  
րանցիայի վճիռներից և նա այդ վճիռնե-  
րի վրա հիմնեց իր պահանջները:

Գործերը այս գրութեան մէջ էին, երբ  
թիւրքիան հրաժարվեց ենթարկվել կոնֆե-  
րանցիայի վճիռներին և դրանով տեղիք  
տուեց Ֆրանսիային միջնորդ դատարան  
առաջարկել այն պայմանով, որ երկու կող-  
մերն էլ սկզբից պարտաւորվէին ենթարկ-  
վել միջնորդ դատարանի վճիռներին: Թէ  
Յունաստանը և թէ թիւրքիան մերժեցին  
այդ առաջարկութիւնը, որովհետև առա-  
ջինը դրանով անորոշ դրութեան մէջ էր  
ղնվում, իսկ երկրորդը վախենում էր, որ պե-  
տութիւնները նոյնը կը վճռէին, ինչ որ  
Բերլինի կոնֆերանցիան որոշեց: Պետութիւն-  
ները, ցանկանալով անպատճառ խանգարել  
յայն-թիւրքական պատերազմը, ստիպված  
էին միջնորդների դէր խաղալ և փոխա-  
դարձ համաձայնութիւն կայացնել թիւր-  
քիայի և Յունաստանի մէջ:

լուսամուտներին, որոնք բաւական բարձր էին:  
— Կատօ, ասաց աղախինը, — կարող ես ինձ  
փոքր ինչ բարձրացնել, որ գլուխս հասնի լու-  
սամուտին:

— Կարող եմ, դուք միայն ձեր տանը գրե-  
ցէք ափերիս մէջ և բարձրացէք ուտերիս վրա,  
ես կը կանգնեմ պատի մօտ, ուղիղ լուսամուտի  
ներքեք:

Կատօն երկու ձեռքերի մասները միմեանց  
հետ հիւսկեղով, կազմեց շարժական սանդուղքի  
առաջին սաստիկանը: Օրիորդը մի ոտքը նրա  
վրա դնելով, միւսը դրեց նրա ուտի վրա, և իր  
ձեռքերով պատը բռնելով, բարձրացաւ մինչև  
լուսամուտը: Միտեց այն տեղից նայել: Այնչէն  
չէր երևում, որովհետև լուսամուտի փեղկերը ա-  
պակու փոխարէն պատած էին թղթով: Նա իր  
մատով զուշուցնեց մի փոքրիկ ծակ բաց ա-  
րեց թղթապատի մէջ: Այդ գործողութիւնը կա-  
տարկեցաւ մի և նոյն բուռեղում, երբ բէկը իր  
երկար տնդային մատանիցութիւնից յետոյ,  
վերջապէս վճռեց կնքել նամակը և յանձնել  
Ազատուն:

Օրիորդը դեռ նայում էր իր դիտարանից: Նա  
տեսնում էր, թէ որպէս բէկը սուրհանդակի  
գնացուց յետոյ սաստիկ յուզված էր, որքան օ-  
տարտոտի կերպով վառվում էին նրա վրդովածու-  
թով լի աչքերը, որքան անհանգիստ կերպով  
նայում էր նա թղթերի մի կապոցի վրա, որ  
դրած էին նրա մօտ: Յետոյ տեսաւ, թէ ինչպէս  
նա մօտեցաւ ճրագին և սկսեց գրել: Արքան  
գունամթափ, որքան սաստիկ էր նրա ղեմքը  
ճրագի լուսի առջև:

Օրիորդը երկար նայել չը կարողացաւ: Նրա  
տանը գործողացին, փոքր էր մնում, որ պիտի  
ցած գլորվէր: Նա լարեց իր վերջին ուժերը, մի  
ձեռքով պատը բռնելով, միւս ձեռքով սկսեց  
բաղխել լուսամուտը: Բէկը ոչինչ չը լսեց: Նա  
սաստիկացրեց զարկը: Բէկը այժմ լսեց, բայց  
կարծեց, թէ քամին է, դարձեալ շարունակեց  
իր գրելը: Քանի բուռեղեց յետոյ նա լսեց իր ա-  
նունը:— «Կատօ, թէ... Կատօ, թէ... Կատօ, թէ...  
չեւնեք, կարծես, հասան մինչև նրա սրտի  
խորքը: Նա մի կողմ ձգեց գրիչը և շտապով  
վազեց դուռը բաց անելու: (Կը շարունակվի)

Կ. Պօլսի մէջ այժմ կատարվող բանակ-  
ցութիւնները, որոնց մասին շատ քիչ տե-  
ղեկութիւններ են ստացուում, հասարակ  
միջոցութեան բնաւորութիւն ունեն: Բա-  
նակցութիւններ սկսելով Կ. Պօլսի մէջ, պե-  
տութիւնները չեն կարող ազատ վճիռներ  
կայացնել: Նրանց պետականները չեն կարող  
անիրաւացի և չափազանց համարել այն  
բանը, ինչ որ մի քանի ժամանակ իրաւացի  
և անհրաժեշտ էին համարում:

Այժմ յայտնվում է, թէ գեապանները  
ի՞նչ ընթացքի պէտք է հետեւեն Նրանք  
պէտք է համաձայնութիւն ստանան Բ.  
Գոնից, որ նա նշանաւոր զինուորական  
և այնուհետև զրանց թերթի կօնֆերեն-  
ցիայի վճիռներին համեմատ յայտնելով, կը  
ստիպեն Գոնիստանին բաւականապէս այդ  
զինուորական: Գեապանները կամենում են,  
որ Թէսալոյայի մէջ զինուորական թերթի  
կօնֆերենցիայի վճիռ համեմատ լինեն, իսկ  
Լալիստի տեղ Գոնիստանին որովհետև Կրիտ  
կղզին: Բայց կը բաւականապէս արդեօք  
Գոնիստանը զրանով: Յոյների համար Լալի-  
ստը մեծ նշանակութիւն ունի, որովհետև  
եթէ այդ նահանգը այժմ չանցնի Գոնիս-  
տանի ձեռքը, կարող է ուրիշ պետութեան  
ազդեցութեան ենթարկվել և յաւիտեան  
բաժանվել Գոնիստանից, մինչդեռ Կրիտ  
կղզին, որ բնակեցրած է յոյն տարրով, վաղ  
թէ ուշ կը միանայ Գոնիստանի հետ:

Այսպիսով Եւրոպայի երկու տարվայ աշ-  
խատանքները ազարդելն անցան, որովհե-  
տե նա չը կարողացաւ հանգստացնել Բալ-  
կանեան թերակղզին: Եթէ գեապանները  
կը կարողանան համաձայնվել Թերթիայի  
հետ, այնու ամենայնիւ ստիպված կը լինեն  
ձեռքով գործել Գոնիստանի վրա, որ նա  
ընդունի նոր պայմանները: Ուրեմն յոյն-  
թերթական պատերազմը, յոյների և այլ  
ազգութիւնների ազատամբութիւնը Բալկա-  
նեան թերակղզու վրա գեա ևս հաւանա-  
կան են:

ԱՆԿՆԻՍ

Լօնդոնից լրագրիներին հաղորդում են  
հետեւեալ տեղեկութիւնները: Ռուսաստա-  
նի քաղաքական գործերը սփորական ժա-  
մանակներում շատ քիչ են հետաքրքրում  
անգլիացիներին, բայց անցեալ շաբաթ ամ-  
բողջ Անգլիայի ուշադրութիւնը Ս. Պետեր-  
բուրգի վրա էր դարձրած: Ռուսաց նոր  
թագաւորը սկսում է իր գործունէութիւնը  
բոլոր կուսակցութիւններին պատկանող ան-  
գլիացիների բարի ցանկութիւններով: Ամեն-  
քը տրամադրված են նրանից զեղեցիկ գոր-  
ծերի սպասել և հաւատալ այն լուս լու-  
րերին, որոնք նրա մասին տարածված են:  
Թէ ազատամիտները և թէ պահպանողա-  
կանները միատեսակ կարծում են, որ նա իր  
բազմութիւ հպատակների հաւատարմու-  
թիւնը կը գրաւէ: Այստեղ ամենքը հա-  
մոզված են, որ անբաւական կամ յեղափո-  
խական Ռուսաստանը շատ վտանգաւոր կը  
լինի Եւրոպայի համար: Մի և նոյն ժամանակ  
ամենքը կարծում են, որ Ռուսաստանին հար-  
կաւոր է ազինել խնայելի, բարի և հաս-  
տատ բնաւորութեան տէր կառավարիչ, որի  
հեղինակութիւնը ամենքից ձանձուցած լի-  
նի: Այդպիսի կառավարիչը, անգլիացիների  
կարծիքով, կը ապա Ռուսաստանին այն բա-  
ւոր վերանորոգութիւնները, որոնց մէջ նա  
պէտք ունի:

Կան մարդիկ, որոնք ասում են, թէ դա-  
ւադրութիւնները և յանցանքները երկիւղ  
են պատճառում և յետաձգում են վերա-  
նորոգութիւնների իրագործումը: Մի և նոյն

բանը ասում են իրանդիայի մէջ կայուա-  
ծական մի լաւ վերանորոգութեան մտցնե-  
լու դէմ: Բայց մեծամասնութիւնը անուշա-  
ղիք է թողնում այդ պատճառարանու-  
թիւնը և պնդում է, որ կառավարութեան  
փոխվելը ամենալաւ միջոց է քաղաքակա-  
նութիւնը նոր ուղղութիւն տալու համար  
առանց ինքնասիրութեանը վնասելու:

Անգլիայի մէջ ընդհանրացած է այն կար-  
ծիքը, որ նիշիլիստները մի աննշան խումբ  
են կազմում, բայց որ այլ կարգեր ցանկա-  
ցող խնայելի մարդկանց թիւը բաւական  
մեծ է և որ, եթէ այս վերջինները բաւա-  
կանութիւն ստանային և անտարբեր հան-  
դիսատեսներից քաղաքական հիմնարկու-  
թիւնների գործունէայ պաշտպաններ գառ-  
նային, նիշիլիստները շուտով կանհետա-  
րի մէջ: Այստեղ ոչ ոք կարծիք չէ յայտ-  
նում, թէ ինչ տեսակ կարգեր պէտք է  
մտցնել Ռուսաստանի մէջ: Ժամանակակից  
անգլիացիները այնքան ազէտ չեն, ինչքան  
իրանց նախորդները, որոնք երեւալայում  
էին, թէ անգլիական հիմնարկութիւնները  
կարող են պիտանի լինել բոլոր ժողովուրդ-  
ների համար: Անգլիայի մէջ համայնքների  
ժողովը ներկայացնում է իսկական կառա-  
վարութիւն, որովհետև մինիստրութիւնը ոչ  
այլ ինչ է, եթէ ոչ կատարող մասնաժողով,  
որ ընտրվում է ժողովի մեծամասնութիւնից:  
Բայց Ռուսաստանի համար ոչ ոք կարելի  
չէ համարում այնպիսի մի կառավարու-  
թիւն, որի ժամանակ թագաւորի կամքը  
աւելի մեծ ոյժ չունենայ, քան թէ Անգ-  
լիայի մէջ սովոր են տեսնել:

Անգլիայի մէջ վերափոխութեան հին  
չափազանց յարգված է: Նրա անբիծ կեան-  
քը և հաւատարմութիւնը իր ամուսնի յի-  
շատակին նպաստելին գահի հաստատու-  
թեանը և թագաւորու հեղինակութեանը:  
Լրագրիներին պատմածները կայսր Ալեքսանդր  
III-ի բազում քան ընտանեկան կեանքի մա-  
սին զբաւեցնել անգլիացիների համակրու-  
թիւնը և այդ հանգամանքը նպաստում է,  
որ շատերը մեծ յոյսեր են դնում նրա կա-  
ռավարութեան վրա:

Անգլիացիները յոյս ունեն, որ Ռուսաս-  
տանի քաղաքականութիւնը խաղաղաւոր  
կը լինի: Ալեքսանդր II-ի ոչ մի գործողու-  
թիւն նրան այնքան համակրելի չը դարձ-  
րեց, քան թէ այն veto, որ նա գրեց իշ-  
խան Բիսմարկի և Մոյսկէի պատերազմա-  
կան դիտաւորութիւններին 1875 թուական  
նին: Մինչև անգամ այն մարդիկ, որոնք  
կարծում են, թէ Ֆրանսիան Ռուսաստանի  
օգնութեամբ կը վերադարձնի իր կորցրած  
նահանգները, խտտափայտվում են, որ Ֆեր-  
մանիայի դէմ լինումնութեան սկսելը վա-  
ղճամանակ է: Կ. Պօլսի մէջ կատարվող  
բանակցութիւնների վրա նոյն տեսակետից  
են նայում: Դատ քիչ անգլիացիներ կը հա-  
մաձայնեն պատերազմ սկսել Գոնիստանի  
պատճառով: Բայց ամենքը ցանկանում են  
որ պետութիւնները համաձայնութեամբ  
գործեն յոյն-թերթական պատերազմի ա-  
ռաջն աննշան համար: Եթէ Ռուսաց կա-  
ռավարութիւնը այդ դժբաղդութեան ա-  
ռաջը կանսի իր չափաւորութեամբ և կը  
հրաժարվի զազանի դաշնակցութիւններից,  
Անգլիայի ամենաշնորհ համակրութիւնը նը-  
րա կողմը կը լինի:

Ինչպէս երևում է, անգլիական կառա-  
վարութեանը բաւական դժուարութիւններ  
են սպասում ապագայում: Պէտք է ի նկա-  
տի առնել, որ գեա ևս իսկական պարա-  
մենտական կռիւնը չեն եղել ազատամիտ-  
ների և պահպանողականների մէջ: Երկու

կուսակցութիւններն էլ համաձայնութեամբ  
էին գործում իրանդական պատերազմաւորնե-  
րին անգոր դարձնելու համար: Իսկական  
կուսակցական կռիւը այն ժամանակ կը  
սկսվի, երբ կտառաշարվի կայուածական նոր  
օրէնքը իրանդիայի համար:

Ստիպողական օրէնքը իրանդիայի մէջ  
չափաւորութեամբ է գործադրվում կառա-  
վարութիւնից: Թէպէտ 34 մարդ կայանա-  
ւորված են, բայց կայուածական միութեան  
գործունէայ անդամներից շատերը հրապա-  
րակապէս աշխատում են, միտինգներ են  
կազմում և համոզում են Ֆերմերներին չը  
վճարել կայուածական տուրքերը: Ուրեմն  
պէտք է հաւատացած լինել, որ կայանա-  
ւորվածները որ և է յանցանք են գործել:  
Ֆերմերներից շատերը թէպէտ վճարում են  
կայուածական տուրքերը, բայց միութեան  
հետ համաձայնութեամբ են գործում:

ԹԻՒՌԻՍ

Լրագրիները հաղորդում են հետեւեալը:  
Վիէնայի «Polit. Corresp.» լրագրիւր ա-  
հասարակ Կ. Պօլսից հաստատ լուրեր է ստա-  
նում, որոնք վերջը ազգացուցում են փոս-  
տերով: Նորիւրում «Polit. Corresp.» լրա-  
գրիւր հաղորդեց, թէ պետութիւնների ներ-  
կայացուցիչները Կ. Պօլսի մէջ վճարեցին  
վերջ դիւն այն անորոշ քաղաքականու-  
թեանը, որին մինչև այժմ հետեւում է  
Թերթաց կառավարութիւնը և պահանջել  
Բ. Գոնից, որ նա պաշտօնապէս հաղորդէ  
գեապաններին իր զինուորական ամենամեծ  
չափը: Այդ նպատակով գեապանները սկսել  
են խորհրդակցել և եթէ այդ խորհրդակ-  
ցութիւնները մինչև այժմ ցանկալի հե-  
տեւանքներ չեն ունեցել, դրա պատճառն  
այն է, որ գեապանները պէտք է զեկու-  
ցուաներ ներկայացնել իրանց պետութիւն-  
ներին:

Եթէ այս տեղեկութիւնները ճիշդ են,  
ուրեմն Կ. Պօլսի մէջ կատարվող բանակցու-  
թիւնները աւելի զրական ուղղութիւն կը  
գտանան: Այդ քայլը պէտք է կատարվէր  
գեա այն ժամանակ, երբ գեապանները սկսե-  
ցին բռնակցել թերթաց հաւատարմատար-  
ների հետ և այդ դէպքում մի քանի շա-  
բաթներ անգուռ չէին անցնի:

Պետութիւնների ներկայացուցիչները այժմ  
հեշտութեամբ կարող են համաձայնութիւն  
կայացնել, որովհետև զանազան հանգամանք-  
ների շնորհիւ անհամաձայնութիւնների  
պատճառները հեռացրած են: Ոչ Ֆրանսի-  
ան և ոչ Աւստրո-Ունգարիան այնպիսի զրե-  
ւարութիւններ չեն ծագեցնի, որոնք ձեռն-  
առու լինեն Բ. Գրանի համար, իսկ Ֆերմա-  
նիան չի խանգարել ընդհանուր գործը:  
Այժմ կառավարչապէս միջոց կայ ընդհա-  
նուր առաջարկութիւններ անել Բ. Գրանը  
և այդ գործը աւելի էլ շուտ պէտք է կա-  
տարվի, որպէս զի յոյն-թերթական վէճը  
խաղաղ վարձան ստանայ:

Եթէ այդ առաջարկութիւնները կընդուն-  
վեն յունական կառավարութիւնից, այն ժա-  
մանակ կը մնայ թերթաց կառավարու-  
թեան համաձայնութիւնը ստանալ: Այժմ  
մեան հանդամանքները ի նկատի առնելով,  
Բ. Գոնը անկարող է անպայման նրանց  
մերժել, այլ նա կաշխատի յետաձգել գոր-  
ծը, բայց Անգլիայի և Ռուսաստանի մօտ  
յարաբերութիւնները, որոնք վերջին ժամա-  
նակներում աւելի բարեկամական են դառ-  
նում, կազմեն սուլթանի և նրա խորհրդա-  
տեսների վրա և կը ստիպեն նրանց գործը  
խաղաղութեամբ վերջացնել:

Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին հա-

ղորդում են, որ այնտեղ կատարվող բանակ-  
ցութիւնները կարող էին լաւ հետեւանք-  
ներ ունենայ, եթէ Բ. Գոնը իր սովորու-  
թեան համեմատ անաղաղ չաշխատէր որ-  
քան կարելի է գործը յետաձգել: Յոյն-  
թերթական վէճի խաղաղ ձանապարհով  
լուծվելու մասին սկզբից ոչինչ չէ կարելի  
ասել: Կ. Պօլսի մէջ զանազան ազդեցու-  
թիւններին շնորհով գործերի զրուցիւնը  
անաղաղ փոփոխվում է և այդ պատճառով  
քաղաքագէտները անհանգստութեամբ են  
վերաբերվում բանակցութիւններին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագրիները հաղորդում են որ լորդ Բիկօնս-  
ֆելդ ծանր կերպով հիւանդացել է:

—Յիւրիսից հեռագրում են որ այգտեղի ժո-  
ղովրդական տոնախմբութեան ժամանակ ճառեր  
ասվեցան ընդդէմ սօցիալիստական կօնֆերենցի, որ  
պէտք է կայանայ Յիւրիսում:

—Լրագրիները կարգ-լրագրի վերադարձաւ Ս.  
Պետերբուրգից Վիէնա:

—Լօնդոնից հեռագրում են, որ «Freiheit»  
սօցիալիստական լրագրի խմբագիր Մոտ կա-  
լանաւորված է և նրա ապարանը փակած է պօ-  
լիցիայի կարգադրութեամբ: Վիւսկեցաւ դատա-  
տանական քննութիւնը: Մոտ մեղադրվում է  
իր լրագրի յօդուածներով գերմանական կայ-  
սրին սպանելու գործում մէջ: Գերմանական  
սօցիալիստները Անգլիայում դիտաւորութիւն  
ունեն գումարել մի ժողով, որտեղ պէտք է բա-  
ղբերն ազատութեան ձեռնան դէմ:

—Գերմանական Բայրութագի մէջ սօցիալիստ-  
ների մասին առաջարկութիւնը քննուած ժամա-  
նակ, մինիստր Պուտտլիամը աշխատեց ապացու-  
ցանել որ սօցիալիստների դէմ կառավարութե-  
ան մի և նոյն ժամանակ կռակող և ներդա-  
մալ կերպով էր վարվում: Աւստրիականներն  
ընտանիքների օգտին ձանապարհութիւններ կրէք  
չէին արդելում, եթէ այդ նպատակին էին գործ  
դրվում: Սօցիալիստները, սակց մինիստր, մի ա-  
նաստուած, կամաւորիտական կուսակցութիւն են,  
որոնք ձգտում են ամեն կարգ ոչնչացնելու: Մոտն  
և չաղէմանի կուսակցութիւնը քաղաքում է քա-  
ղաքական սպանութիւն: Կուսակցութեան չափա-  
ւոր մասը, ձեռնարկ է զի ցանում անմիջապէս  
բռնի յեղափոխութեան գործել, բայց անընդհատ  
պրօպագանդայով աշխատում է վայր դնել ժողո-  
ւրդի մէջ յարգանք դէպի իշխանութիւնը: Իս-  
կապէս, աւելացրեց Պուտտլիամը, երկու կու-  
սակցութեան մասերի ձգտումներն էլ միանման  
են: Մինիստրը կարգից Բայրութագի առջև Մոտ-  
սի և չաղէմանի յօդուածներից մի քանի տե-  
ղեր, որոնք վերաբերվում էին մարտի 1-ի եղև-  
նադրութեանը: Վերջացնելով իր ճառը մինիս-  
տրը յայտնեց որ Գերմանիայի քաղաքական ներ-  
քին գրութիւնը այն տեսակ է, որ հաւանական  
է թէ շուտով կայացից քաղաքն էլ կը յայտնվի  
պաշարման գրութեան մէջ:

—Իշխան Բիսմարկի առաջարկում է Գերմա-  
նիայի և եւրօպական այլ պետութիւնների մէջ  
համաձայնութիւն կայացնել, որի գործիքամբ  
իրաքանիքը կառավարութիւնը կը պարտաւոր-  
վի միւս տէրութեան պաշտօնական պահանջու-  
թեան հիման վրա յանձնել նրան այն բոլոր  
անձանց, որոնք մասնակից են քաղաքական  
որ և է սպանութեան գործում: Այդ առաջար-  
կութիւնը ներկայացրած է արդէն Բայրութագին  
և յետոյ կառավարիչի օտար պետութիւններին:

—Բիլիսի պաշտօնական լրագրիւր հաղորդում  
է որ Բուշ նշանակվել է արտաքին գործերի  
մինիստրի օգնական:

—«Temps» լրագրին Լօնդոնից հեռագրում են  
որ Անգլիայի և թերթերի մէջ կազմված հաշ-  
տութեան պայմանը շատ լաւ ապաւորութիւն  
գործեց անգլիական հասարակական կարծիքի  
վրա:

—Ֆրանսիական սենատի մէջ դիտաւորութիւն  
կայ առաջարկել մի նոր օրէնք, որով կը պա-  
կասեցվի անշարժ կապերի վրա դրված հարկերի  
չափը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ե Ջ Ա Ջ Պ Ս Ե Ն Ե Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի Ց

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մարտի: «Правит.  
Вѣстн.» լրագրիւր հաղորդում է, ժողովուր-  
դական լուսաւորութեան մինիստր Սաբու-  
րով իր խնդրի համեմատ արձակած է  
պաշտօնից, նշանակվելով սենատի անդամ և  
պահելով ստատուս-սենյորի կոչումը: Գէյս-  
տիլիսիսի տալիսի սօցիալիստի քարծոն Նիկօլա-  
յին հրամայած է ժողովրդական լուսաւո-  
րութեան մինիստր լինել: Ներքին գործերի  
մինիստր վճիռը դարաւրեցնել «Смолен-  
ский Вѣстник» լրագրի հրատարակու-  
թիւնը ուժ ամսով և արգելել «Поря-  
докъ» լրագրի հատով ծախվելը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

# Յ Ը Յ Տ Ը Բ Ը Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառուի է «Կենտրոնական» և պ. 9. Գրիգորեանցի «Կովկասեան» գրափառաւանդներում «Մտաւոր, Ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին» հեղ. Չոն Ստեւարտ Բէլկլի. թարգմ. Գրիգոր Շահրուբադեանի. զինն է 60 կողէկ: Օտարաբաղաքացիք կարող են ուղղակի թարգմանչին զինել այս հասցեով. Վ. Թիֆլիս, Կուրսու Գրիգորի Դуховной Семинарий Нерсисянъ, Григорию Шахъ-Будагянцу.

Տպագրութեան համար բոլորովին պարատ է թարգմանչի հետեւեալ աշխատութիւնը. «Մայրական Գաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած». հեղ. Ժ. Բամբուստի:

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց բնական գոնը վերադարձնող: Գինը 2 ռ. շերտ, ՓՈՍՏԱՅՈՎ ուղղակի 2 ռ. 49 կող: ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԻՎ, մազերը ամրացնելու համար, 1 ռ. ամանը վրձին զլխապախ: զէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հասաւէտ ջրեր և այլն: 41—100

## ՆՈՐ ՏՊԱՐԱՆ

ՄՈՎՍԷՍ ՎԵՐԳԵՆԵՆՑՑ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՆՈՎՍԿԱՅԻ ՓՈՂՈՑ, տուն ԻՇԻ. ԲԵՀՐՈՒԹՈՎԻ

Այս օրերս բանալով թիֆլիսցի լիակատար ՏՊԱՐԱՆ իւր ամեն պարագայից, ընդունում են ապելու ՍՄԵՆ ԼԵՂՈՒՈՎ և ամեն տեսակ պատուէրներ, այն է՝ ԳՐԲԵՐ, ԼՐԱԳՐԵՐ, ԱՍՍԱԳՐԵՐ, ԲԼԱՆԿՆԵՐ, ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿՆԵՐ, ՀԱՇՍԻԻ ՏԵՏՐԱԿՆԵՐ, ՏՈՒՍԱԿՆԵՐ, ՉԱՅԻ ԵՒ ԾԻՍԻՈՑԻ ԵՍՈՒԼԻԿՆԵՐ (զանազան գոյններ) և այլն:

Տպագրութեան մարտնչութեանը և տպարանական կանոնների ճշտութեանը համար ԻԲՐԵԻ ՄԱՍՆԱԳԷՏ պատասխանատու են լինում միշտ: ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ կը կատարուին ԿԱՐՃ ՄԻՂՈՑՈՒՄ, ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ: 4—5 (2)

Սակփան ԵՐԱՄԵՆԱՅՈՒՆՑՈՒՆ օտար պատիւ յայտնելու օր նա ընդունում է ՎԻԷՆՆԱՅՈՒՄ կատարելու ամեն տեսակ առևտրական և այլ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Հասցէն: ВѢНА (Австрія) St. Jeram-janz, Hôtel Schröder. WIEN, II.

ՄԵԾ ՎԱՋԱՌՈՒՄՆ գործարանական գներով ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ ԱՐԾԻՐՈՒՆՈՒ գաղթելու: Նոյն տեղը ծախում են անգլիական ֆիլարաններ, մանանիխ, օսյայ (կրախմար), կա կաօ, շօխորդ, բաժակներ և դէմքը դեղեկացնելու համար ծրծրէկ, կաթնի, նուշի և զլիցերինի իւր: Հրացաններ նոր ձևի: 11—12

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ծախում են հազի դէմ ԿՕՆՑԵԿՏՆԵՐ 40 կ. Փունտը, խինայի զինի Չերմի դէմ 1 ռ. 50 կ. շերտ, պարսկական ՇԵՐԲԵՏ, ցիտրոս մազնեղայի ծարաւի դէմ 70 կ., ամենալու ԿՕՆԵԱԿ 2 ռ., հին ՊՕՐՏ-ՎԷՅՆ ԵՒ խերս 1 ռ. 40 կ., ՄԵՂՐԱՄՕՄ և չոր ՍԱՊՈՆ և այլն: 11—15

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախում է «Կենտրոնական» ու «Կովկասեան» գրափառաւանդներում ՄՕԼԻԷՐԻ «ՏՂԱՄԱՐԴԱՆՑ ԽՐԱՏ», ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ: Գինն է 30 կ.:

ՄԱՄՈՒԼԻ տակից դուրս եկաւ և շուտով կը տարածուի «ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ» գրքիցը 96 երեսից բաղկացած և տպագրած ԵՐԵՒԱՆՈՒՄ:

Կը ծախվի առաւելագույն թիֆլիսի մէջ «Կենտրոնական գրափառաւանդում»: 4—7.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառուի է թիֆլիսի հայ գրափառաւանդների օժանդակով «Կուսակցական» Գրարատու ընկերի խոնարհումը մի աղիւսակի մէջ, գործնական և գիտակցական ուսումնական ամսագրի: Գինը՝ հատով 25 կող, գումարով 20 կ.:

Այս գրքիցը պարունակելով իւր մէջ բայերի մի պարզ նախագիտելիք, յանգրի, օրինակներ և խոնարհումը ամբողջ աղիւսակներ՝ շատ հեշտացնում է աշակերտաց զբարաւ բայերի ուսումը: Ի նկատի ունենալով գործի օգտակարութիւնը և զին թիֆլիսեցի համարձակ կարելի է խորհուրդ տալ զբարաւ ուսանող աշակերտաց ձեռք բերելու յիշեալ երկաթիւթիւթը:

Նոյն հեղինակի «Հիւսուածք հայ պատմարար», 3 հատոր (3 ռ.) և «հայոց հիթանոական կրօնը (30 կ.) կարելի է նոյնպէս թիֆլիսի գրափառաւանդից կամ ուղղակի հեղինակիցն ստանալ:

ԿԻԿԵԼ ՍՕԼՕՄՕՆՕՎՆԱ և նրա օրգիք իՎԱՆ և ԲԱԳՐԱՏ ՇԱՀԲԱՉՈՎՆԵՐԸ ցաւօք արտի յայտնելով առաջինը իր ամուսնի, իսկ երկրորդները իրանց հօր ԱՐՏԻՐ ԻՍՍԱԳԷՏ ՇԱՀԲԱՉՈՎԻ ՄԱՀՈՒԱՆ մասին, խնդրում են բարեկամներին և ծանօթներին գոնիկ հանգուցեալի յուղարկուողութեան հանդիսին ՇԱԲԱԹ, մարտի 28-ին: Հանգուցեալի մարմինը կը տանեն Կուրսու թուրքոսան Աստուածածնի եկեղեցին կը սեղանական տանից ԵԼԻՉԱՎԵՏԻՆԱԿԱՅԱ փողոցի վրա № 59: 2—2

144 Արժուճու գալերէա 144 ամենաճան պահեա մերէլի և հայկիների:

Въ Редакціи газеты «МШАРЪ»  
Продается  
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“  
Д. Григорія АРЦРУНИ.  
Брошюра напечатана въ Москвѣ.  
Цѣна 25 коп.

Չը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվին. ԿՕՆԿՕ-ԹԷՅ 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կող, շատ ԼԱՒ ՄՕՆԻՆԿ 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ., հիւնայի ԿԱՅՍԱՌԻ 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ. և ԱՄԵՆԱԿԱԿ ԹԷՅ 2 ռ. առանց թղթի: Անգլիական բէլգիկներ 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ, Չոնսի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, Տուրքի ԳՐԻՉՆԵՐԸ և Էկարակա կակաօ-շօխորդի ծախելու համար, որոնք փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեզալ ստացան: ՀՈՏԱԼԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 ռ. 65 կ. և ամենալու 2 ռ. 30 կ.: Սաճառականներին օրտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հագուստ 15 ռ., կոնֆէկաներ հազի դէմ 60 կ. Փունտը: 50—100

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառուի են Կենտրոնական գրափառաւանդում հետեւեալ գրքերը. Հինգէլի բանաւոր և զբաւոր հաշուելու խնդիրներ, ծխական դպրոցների համար. փոխադրեց Ս. Մանդիկան 1-ն և 2-րդ տարի. թիֆլիս 1881 զ. 40 կ.

Գրարար բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ, Գործնական և գիտակցական ուսումնական ամսագրի համար. յօրինեց Կ. Կոստանեան Ե. Թիֆլիս, զ. 25 կ. Նոյն տեղը վաճառուի են հետեւեալ գրքերը. Սիրաք և Մամուլի Բարի հօր կրթական դասեր: Գրեց խրիմեան հայրիկ Կ. Պօլիս զ. 1 ռ. 25 կ. Լ. Չէտարֆիլիսի խրատ առ օրդին իւր. Վինետիկ զ. 75 կ. Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ Գ. Վ. Սրուանձեանց Կ. Պօլիս զ. 1 ռ. 25 կ. Թուղթ Մարկոսի Աղբարեկանց: Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցու ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական ճէր ներսէս պատրիարք հայոց Կ. Պօլիս զ. 2 ռ. 25 կ. Պարսեան, Ազգային ջոջեր 3 հատոր, Կ. Պօլիս զ. 3 ռ. 5 կ. Մանանայ: Ժողովեաց և ի յոյս էած Գ. Վ. Սրուանձեանց Կ. Պօլիս զ. 1 ռ. 75 կ. Տարբեր խնամատարութեան ընդարձակ Ի. Հ. Աւք. Վ. Գուրգենեան 5 հ. Կ. Պօլիս զ. 3 ռ. 50 կ. Խորհրդական բերդը: Վիպասանութիւն Ֆօփեր օր. Գաղիացեայ, Վինետիկ զ. 1 ռ. Լճակի ձկնորդ, յօրինեց Հ. Յ. Վ. Իսապրահանց: Վինետիկ զ. 1 ռ. Միաստարանց. Գնար Հայկական Ս. Պ. Բ. զ. 1 ռ. 30 կ. Մուղայք Հայաստանի: Նոր երգարան թիֆլիս զ. 50 կ. Բառարան ի ուսուց լիզուէ ի հայ. աշխ. Գ. Երեցիտեանց թիֆլիս զ. 4 ռ. Օտարաբաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր ռ. համար 10 կ. պատուէրները պէտք է ուղղակի այս հասցեով «Въ Тифлисѣ, въ Центральную Книжную торговлю».

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐԲԵՐ

1. Ա. Մ. Ե. Պ. — Կիւցագուճք ըստ խորնացուցը Հայկ. Արամ, Վահագն. պատկերներ պատմական կեանքից: Տիֆլ. 81 թ. զինն է 30 կ.:
2. Կոստանեանց. Կ.—Գրարատու ընկերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. Գործնական և գիտակցական ուսումնական թիֆլիսի համար. զինն է 25 կ.:
3. Երվանկեանց Եղ. քհնյ. — Խմբական ձայնագրեալ ազգային երգեր (սակաւաթիւ) 50 կ.:
4. Մ. օրիս Բ. Բ.— փոքրիկ ձեռնարկ Գործնական տնտեսութեան. թարգմանց

զանազան փոփոխութիւններով Ս. Պալասանեանց 50 կ.:

5. Մովսէսի խորնացուց պատմութիւն Հայոց 80 կ.:

6. Չոն Ստ. Բէլկլի—մտաւոր, Ֆիզիքական և բարոյական ինքնակրթութիւն 60 կ.:

Մամուլի տակ են

1. Երեցիկ— Թէոդորոս Ռշտունի
2. — Թորոս Վեանի (2-րդ տըպագրութիւն)
3. Գամառ-Քաթիկայի—մանկական երգեր և ոտանաւորներ:

2—12

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Արովհետեւ այդ մագալիններ ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականապէս նուրբ շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 Փունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շօխորդ-Ֆրայ, մուրաբա գալլերէում: 100—73 և կոնֆէկաներ 25% աւելի էժան, քան թէ

ամեն տեղ, անկողներ, հրացաններ, բեր լոլկերներ, կողպէքներ, մատուցարաններ, ս, մաններ, դանակներ, գալլներ, թէյամաններ, բաժակներ, թասքեր, դուլպանկանանց և տղամարդկանց, թաշկինակներ մակնիտօշներ, կալենիօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձևով համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէյ ուրիշ տեղ: Արժուճու գալլերէում: 100—73